



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**  
**ՈՐՈՇՈՒՄ**

2017թ. հունվարի 26

N 7-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արագածի Դ. Դեմիրճյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի նախագահի 2017 թվականի հունվարի 24-ի գրությունը **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին» N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Ապարանի տարածաշրջանի 3-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) «Արագածի Դ. Դեմիրճյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում «Արթուր Խաչատրյան» բառերը փոխարինել «Արթուր Խալաթյան» բառերով:

**Գ. ԳՅՈՂԱԼՅԱՆ**